ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«02» դեկտեմբերի **2024թ.**

ՀՐԱՄԱՆ N 184-Ա

ԱՐԹՈՒՐ ՌԱՖԱՅԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով և 17-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման հավելվածի 2-րդ, 8-րդ և 14-րդ կետերը, Արթուր Ռաֆայելի Վարդանյանի 29.11.2024թ. դիմումը, ինչպես նաև Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ավիացիոն անվտանգության վարչության ավագ մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-23.2-Մ3-3) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 29.11.2024թ. անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Արթուր Ռաֆայելի Վարդանյանին 2024 թվականի դեկտեմբերի 3-ից նշանակել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ավիացիոն անվտանգության վարչության ավագ մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-23.2-Մ3-3) պաշտոնում՝ 9 ամիս փորձաշրջանով:

2. Արթուր Վարդանյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի պետ (ծածկագիր՝ 22-4-24.3-Ղ4-1) Կարեն Վերմիշյանին:

3" Արթուր Վարդանյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել 221 312 դրամ (երկու հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր տասներկու) դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

Recoverable Signature

X

ՀԱՅՍԵՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Signed by: GASPARYAN HAYSER 2310760099

ՀԱՅՍԵՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ